

Հաստատված է՝  
«Ճարտարապետության և շինարարության  
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի  
գիտխորհրդի 2016թ.-ի սեպտեմբերի 30-ի նիստում  
Արձանագրություն N° 01-09/16  
գիտխորհրդի նախագահ, ռեկտոր՝

Գ.Շ. Գալստյան

### ԿԱՆՈՆԱԿ Ա Ր Գ

#### «ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՍԽՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏԱԼՈՒ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) սովորողներին ուսանողական նպաստ և կրթաթոշակ տալու մասին կանոնակարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հուլիսի 27-ի հմ. 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու» մասին կարգի, դրանում կատարված փոփոխությունների, համալսարանի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:
2. Սույն կանոնակարգով սահմանվում են ուսանողներին տրվող պետական և ներհամալսարանական կրթաթոշակների տեսակները, ինչպես նաև ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման (այսուհետ՝ նաև ուսանողական նպաստ) և կրթաթոշակ ստանալու իրավունք ունեցող ուսանողների կազմը, պայմանները, հիմքերն ու ընթացակարգը:
3. Պետական և ներհամալսարանական կրթաթոշակները տրվում են համալսարանի բակալավրիատի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա ուսումնառության համակարգում սովորող ուսանողներին: Ուսանողական նպաստը տրվում է բակալավրիատի և մագիստրոսի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսումնառության համակարգում սովորող ուսանողներին:
4. Կրթաթոշակները և (կամ) ուսանողական նպաստները ուսանողներին տրվում են սույն կանոնակարգով սահմանված պայմանները բավարարելու դեպքերում: Կրթաթոշակը և (կամ) ուսանողական նպաստը, որպես կանոն, տրվում է այն ուսանողներին, ովքեր ուսումնառության և այլ տվյալների արդյունքներով ունեն առավել բարձր ցուցանիշներ:
5. Պետական կրթաթոշակների տրամադրման և ուսանողական նպաստի ուսման վարձի փոխհատուցման գործընթացներն իրականացնում է համալսարանը սույն կանոնակարգով սահմանված կարգով:

## II. ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Սույն կանոնակարգով սահմանված կրթաթոշակները ֆինանսական խրախուսանք են: Կրթաթոշակները տրվում են մրցույթով՝ սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված առավել բարձր ցուցանիշներ ունեցող ուսանողներին:
7. Համալսարանի ուսանողներին տրամադրվում են պետական և ներհամալսարանական կրթաթոշակներ:
8. **Պետական կրթաթոշակ.**
  - 1) Համալսարանի ուսանողներին պետական կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և կրթաթոշակ պետական կրթաթոշակ տալու մասին կարգով սահմանված կանոններով.
  - 2) Համալսարանի ուսանողներին տրվող պետական կրթաթոշակների քանակը և գումարի չափը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համալսարանին հատկացված միջոցների սահմաններում:
9. **Ներհամալսարանական կրթաթոշակներ.**
  - 1) ներհամալսարանական կրթաթոշակները տրվում են համալսարանի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Ներհամալսարանական կրթաթոշակների քանակը և գումարի չափը սահմանվում են համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, իսկ կրթաթոշակների տեսակները սահմանվում են սույն կանոնակարգով:
  - 2) համալսարանի ուսանողներին կարող են տրվել ներհամալսարանական հետևյալ կրթաթոշակները՝
    - ա) անվանական,
    - բ) նպատակային,
    - գ) բարեգործական:Ներհամալսարանական և արտահամալսարանական մրցույթներում հաղթող ուսանողներին համալսարանի միջոցների հաշվին կարող է տրվել պարգևավճար:
10. **Անվանական կրթաթոշակ.**
  - 1) անվանական կրթաթոշակը ճարտարապետության, շինարարության, գիտության այլ բնագավառների ականավոր և անվանի գործիչների անվամբ տրվող կրթաթոշակն է.
  - 2) անվանական կրթաթոշակը տրվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ.
  - 3) անվանական կրթաթոշակը տրվում է բակալավրիատի և մագիստրատուրայի առկա համակարգում սովորող ուսանողներին բնութագրող առավել բարձր ցուցանիշներ ունեցող, բակալավրիատի ուսումնառության վերջին 4 կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած և գիտական հետազոտություններով զբաղվող, հասարակական ակտիվություն, պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին՝ անկախ ուսումնառության համակարգից (անվճար, վճարովի և առանց

տարկետման իրավունքի: Մագիստրատուրայի ուսանողների դեպքում հաշվի են առնվում նաև բակալավրիատում ցուցաբերած առաջադիմության արդյունքները):

4) անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողին բնութագրող ցուցանիշների հիման վրա թեկնածուին առաջադրում է ֆակուլտետի գիտական խորհուրդը և հիմնավորված եզրակացությամբ հավակնորդին ներկայացնում համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը: Համալսարանի գիտական խորհուրդը հիմք ընդունելով ուսանողին բնութագրող ցուցանիշները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է անվանական կրթաթոշակի նշանակումը: Համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա համալսարանի ռեկտորը հրաման է արձակում ուսանողին անվանական կրթաթոշակ նշանակելու մասին:

11. Ուսանողին բնութագրող ցուցանիշներն են՝

1) Ակադեմիական բարձր առաջադիմությունը (այսուհետ՝ բարձր առաջադիմություն) բակալավրիատի ուսանողների նախորդ ուսումնառության չորս, իսկ մագիստրատուրայի ուսանողների բակալավրիատի նախորդ չորս և մագիստրատուրայի ուսումնառության առաջին կիսամյակների միջին որակական գնահատականների արդյունքներով առավել բարձր միավորները: (գնահատվում է մինչև 20 միավոր)

2) մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին՝

ա) գիտական ամսագրերում և զանգվածային լրատվական միջոցներում հրապարակված զեկուցումները, ռեֆերատները, գիտահետազոտական աշխատանքները: (գնահատվում է մինչև 3 միավոր)

բ) մասնակցությունը ներհամալսարանական, միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մասնագիտական մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին: (գնահատվում է մինչև 2 միավոր)

3) Ուսանողների հասարակական գործուն դիրքորոշումը բնութագրող ցուցանիշներն են (այսուհետ՝ հասարակական դիրքորոշում)՝

ա) մասնակցությունը ֆակուլտետի և համալսարանի ուսանողական, հասարակական աշխատանքներին: (գնահատվում է 1 միավոր)

բ) մասնակցությունը ուսանողական շինարարական ջոկատների կամ բարեգործական աշխատանքներին (գնահատվում է մինչև 2 միավոր)

գ) այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնությունները (հանձնաժողովի հայեցողությամբ (գնահատվում է 1 միավոր)

4) Ուսանողի պատշաճ վարքագիծը (այսուհետ՝ պատշաճ վարքագիծ)

ա) համալսարանի կանոնադրությամբ և ուսանողների ներքին կարգապահության կանոններով սահմանված պահանջների ու պարտականությունների կատարումը: (գնահատվում է 1 միավոր)

բ) կարգապահությունը (կարգապահական տույժերի բացակայությունը), դասընթացներին մասնակցությունը, վարվելակերպը, բարոյական չափանիշները: (գնահատվում է մինչև 2 միավոր)

12. **Նպատակային կրթաթոշակ.**

1) նպատակային կրթաթոշակը դրամական միջոցներ տրամադրող անձանց կողմից առաջադրված պայմաններով և ժամկետներով որոշակի խմբի ուսանողներին տրվող կրթաթոշակն է: Ուսանողների կազմը կարող է որոշել նաև դրամական միջոցներ տրամադրող անձը՝ հաշվի առնելով ուսանողների ակադեմիական առաջադիմությունը:

2) նպատակային կրթաթոշակը տրվում է համալսարանի և իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից տրամադրված դրամաշնորհի հաշվին:

**13. Բարեգործական կրթաթոշակ.**

1) Բարեգործական կրթաթոշակը սոցիալապես անապահով պայմաններում գտնվող ուսանողներին տրվող կրթաթոշակն է:

2) Բարեգործական կրթաթոշակը կարող է տրվել սոցիալական անապահովության ցուցանիշներ և գնահատականների նվազագույն միավորից բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին.

3) Սույն կետով սահմանված ցուցանիշներ ունեցող ուսանողներին բարեգործական կրթաթոշակը տրվում է բարեգործական, այլ կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց կողմից տրամադրված դրամաշնորհների հաշվին: Բարեգործական կրթաթոշակ կարող է տրվել նաև համալսարանի միջոցների հաշվին:

**14. Պարգևավճար.**

1) Պարգևավճարը ներհամալսարանական, միջբուհական, քաղաքային, հանրապետական, միջազգային, մասնագիտական, սպորտային մրցույթներում, որևէ այլ մրցույթ-ստուգատեսերում ու օլիմպիադաներում (այսուհետ՝ մրցույթներ) հաղթող, համալսարանում սովորող ուսանողներին համալսարանի կողմից տրվող խրախուսական վճարն է:

2) Պարգևավճարը տրվում է միանվագ կամ ըստ ամիսների :

3) Պարգևավճարը տրվում է համալսարանի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

4) Մրցույթի պայմաններն ու կարգը սահմանվում և հաղթողը ճանաչվում է մրցույթ կազմակերպող կազմակերպությունների կողմից՝ մրցույթի արդյունքներով:

15. Ներհամալսարանական կրթաթոշակներ և պարգևավճարներ տրամադրելու համար կարող են թեկնածուներ առաջադրել համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները, ֆակուլտետների ղեկանները, ամբիոնների վարիչները, ուսանողական խորհուրդը և ուսանողը՝ ինքնաառաջադրմամբ: Կրթաթոշակներ տրամադրելու առաջարկությունները ներկայացվում են՝ հաշվի առնելով ուսանողի ուսումնառության ցուցանիշները, ակադեմիական բարձր առաջադիմությունը, մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին, ցուցաբերած հասարակական գործուն դիրքորոշումը և պատշաճ վարքագիծը: Նշված ցուցանիշները հիմնավորող տվյալները տրվում են համալսարանի համապատասխան ֆակուլտետի, ղեկանատի (ղեկանի) կողմից:

16. Ուսանողին ներհամալսարանական կրթաթոշակը տրվում է մեկ ուսումնական տարվա համար, սակայն կրթաթոշակի տրամադրումը կարող է վորանայվել յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին միջին որակական գնահատականի և կրթական պարտավորությունների կատարման արդյունքներով: Սույն կանոնակարգի 15-րդ կետով նախատեսված հիմնական ցուցանիշները պահպանելու դեպքում կրթաթոշակի տրամադրումը շարունակվում է մինչև ուսումնական տարվա ավարտը: Նշված ցուցանիշները չպահպանվելու դեպքում ուսանողը զրկվում է կրթաթոշակից և դադարեցվում է կրթաթոշակի վճարումը: Ուսանողի ներհամալսարանական կրթաթոշակի վճարումը դադարեցվում է համալսարանի ռեկտորի հրամանով՝ հաջորդ կիսամյակից: Կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընդգրկվել սույն կանոնակարգով սահմանված ուսանողական

նպաստների համապատասխան համակարգում՝ տվյալ համակարգում ընդգրկվելու պայմանները բավարարելու դեպքում:

17. Ժամկետային զինվերական ծառայության գորակոչվելու, առողջական վիճակի, հղիության, ծննդաբերության և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքերում ուսումնառությունն ընդհատած ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ներհամալսարանական կրթաթոշակ ստանալու իրավունքը՝ մինչև վերականգնման ուսումնական տարվա ավարտը: պետական կրթաթոշակի դեպքում ուսանողական իրավունքները վերականգնելիս ուսանողը պահպանում է կրթաթոշակ ստանալու իրավունքը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով նախատեսված ընդհանուր կրթաթոշակ ստացողների շրջանակում:
18. Ներհամալսարանական կրթաթոշակների հատկացման մրցույթից հետո որևէ մասնագիտությունում ազատ կրթաթոշակների տեղ առաջանալու և ուսումնական կիսամյակի ուսումնառության արդյունքներով կրթաթոշակից զրկված ուսանողների տեղերը կարող են մրցույթով հատկացվել ֆակուլտետի նույն կամ այլ մասնագիտությունների ուսանողներին:

### **III. Ուսանողական նպաստի Ձեռնարկ Ուսման Վարձի Մասնակի Փոխհատուցումի- ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

19. Ուսանողական նպաստը աջակցություն է համալսարանի վճարովի համակարգում սովորող սոցիալապես անապահով և սույն կանոնակարգով սահմանված այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:
20. Ուսանողական նպաստը վճարովի հիմունքներով սովորող ուսանողի ուսման վարձի փոխհատուցումն է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, համալսարանի ֆինանսական միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների՝ հիմնադրամների, բարեգործների, իրավաբանական և ֆիզիկական անձանց նպատակային և այլ դրամաշնորհների հաշվին:
21. Ուսանողական նպաստը տրամադրվում է հիմք ընդունելով ուսանողի բարձր առաջադիմությունը, սոցիալական խումբը, կարգավիճակը և սույն կանոնակարգի 11-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցուցանիշները: Ուսանողի բարձր առաջադիմությունը համալսարանի ռեկտորի կողմից տվյալ ուսումնական տարվա համար սահմանված միջին որակական գնահատականը(ՄՈԳ) գերազանցող գնահատականն է:
22. Պետության միջոցների հաշվին ուսանողական նպաստների քանակը և նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստների քանակը և ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը սահմանվում է սույն կանոնակարգով՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
23. Պետության միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրվում է սոցիալական ու սույն կանոնակարգի 25-րդ և 28-րդ կետերով

սահմանված որևէ կարգավիճակի մասին ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Պետական միջոցների հաշվին ուսանողական նպաստը վճարովի համակարգում սովորող ուսանողներին փոխհատուցվում է լրիվ կամ մասնակի:

24. Համալսարանի բակալավրի կրթական ծրագրով առաջին կուրս ընդունված ուսանողներին պետության միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոններով համալսարան ընդունված ուսանողներին՝ առաջին կուրսի առաջին կիսամյակից սկսած:
25. Պետական բյուջեի հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձը լրիվ՝ 100%-ով փոխհատուցվում է հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.
  - 1) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով և պարտադիր վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում.
  - 2) առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց մինչև 23 տարին լրանալը՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ առաջին կուրսի առաջին կիսամյակից սկսած.
  - 3) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ առաջին կուրսի առաջին կիսամյակից սկսած և պարտադիր կարգով վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում.
  - 4) զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ առաջին կուրսից սկսած մինչև տվյալ կրթական ծրագրի ավարտը.
  - 5) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողի և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ առաջին կուրսի առաջին կիսամյակից սկսած և պարտադիր կարգով վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում.
  - 6) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտությունների նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին՝ առաջին կուրսի առաջին կիսամյակից սկսած մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը.
  - 7) Ընդհանուր մրցույթից դուրս, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո երեք տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողներին՝ մինչև տվյալ կրթական ծրագրի ուսումնառության ավարտը:

Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված պետության միջոցների հաշվին ուսման վարձի լրիվ փոխհատուցումը հաջորդ կուրսում տրամադրվում է նախորդ

ուսումնական տարվա արդյունքներով առավել բարձր առաջադիմություն (ՄՈԳ) ունեցող ուսանողներին:

Մրցույթի արդյունքներով առավել բարձր առաջադիմությունը չպահպանելու դեպքում փոխատեղման (ռոտացիա) միջոցով ուսանողը հանվում է ուսանողական նպաստների համակարգից, նրա փոխարեն ուսանողական նպաստների համակարգում ընդգրկվում է առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը:

Առավել բարձր առաջադիմությունը հաշվարկվում է համալսարանում գործող գիտելիքների գնահատման սանդղակի կիրառմամբ՝ հարյուրերորդականի ճշտությամբ: Ըստ առաջադիմության ձևավորվում է տվյալ կուրսի, տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների տվյալ ուսումնական տարվա ցուցակը:

26. Նախորդ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում հաջորդ կուրսում առավելությունը տրվում է նախորդ կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:
27. Սույն կանոնակարգի 25-րդ կետի 1-ին ենթակետում սահմանված ուսման վարձի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողները՝ սկսած 1-ին կուրսի 1-ին կիսամյակից:
28. Պետական միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է յուրաքանչյուր տարի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ առկա և հեռակա ուսումնառությամբ խմբերի ուսանողներին՝
  - 1) մինչև 5 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ ուսանողներին՝ ուսման վարձի 50 տոկոսի չափով,
  - 2) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ ուսանողներին՝ ուսման վարձի 60 տոկոսի չափով,
  - 3) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ ուսանողներին՝ ուսման վարձի 70 տոկոսի չափով,
  - 4) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ ուսանողներին՝ ուսման վարձի 80 տոկոսի չափով,
  - 5) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ ուսանողներին՝ ուսման վճարի 100 տոկոսի չափով:
29. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում իրականացնում է նաև համալսարանն իր միջոցների հաշվին ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով: Այդ միջոցները տրամադրվում են վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի ուսանողների առնվազն տասը տոկոսին՝ հիմք ընդունելով ուսանողների բարձր առաջադիմությունը, սոցիալական խումբը և կարգավիճակը:
30. Համալսարանի միջոցների հաշվին վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի ուսման վարձի մասնակի փոխհատուցումն ուսանողական նպաստի ձևով

իրականացվում է ուսանողների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

- 1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային 30 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.
- 2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած (երկկողմանի ծնողազուրկ) ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ առնվազն 50 տոկոս, (փոխհատուցումը դադարեցվում է ուսանողի 23 տարին լրանալուց հետո՝ հաջորդ կիսամյակից).
- 3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս, (փոխհատուցումը դադարեցվում է ուսանողի 23 տարին լրանալուց հետո՝ հաջորդ կիսամյակից). ( )
- 4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս. (փոխհատուցումը դադարեցվում է ուսանողի երեխայի մեկ տարին լրանալուց հետո՝ հաջորդ կիսամյակից).
- 5) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.
- 6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.
- 7) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.
- 8) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս:
- 9) Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ՝ 50 տոկոսի չափով:

Սույն կետով սահմանված խմբերի ուսանողներին ուսման վարձի մասնակի փոխհատուցումն իրականացվում է 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից սկսած՝ 1-ին կուրսի 1-ին կիսամյակի քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում:

31. Համալսարանն իր և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից գոյացած միջոցների հաշվին կարող է աջակցել նաև վճարովի համակարգում սովորող ներքոհիշյալ կարգավիճակ ունեցող և համալսարանի ռեկտորի հրամանով յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանված միջին որակական գնահատականի շեմը հաղթահարած հետևյալ խմբերի և կարգավիճակ ունեցող ուսանողներին.

- 1) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում 2016 թվականի ապրիլյան պատերազմի ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանների պաշտպանության մարտական գործողությունների անմիջական մասնակցություն ցուցաբերած ուսանողներին՝ առնվազն 30%.



Սույն կետով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողները ուսման վարձի մասնակի փոխհատուցման իրավունքից օգտվում են առաջին կուրսի առաջին կիսամյակից սկսած:

- 2) համալսարանի վճարովի ուսուցման համակարգում երկու ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին 15 և ավել միջին որակական գնահատականի դեպքում՝ առնվազն 10%.
  - 3) սահմանամերձ գյուղերի բնակիչ, տվյալ գյուղի հանրակարթական դպրոցի շրջանավարտ ուսանողներին առաջին կուրսի երկրորդ կիսամյակից՝ առնվազն՝ 10%, երկրորդ և բարձր կուրսի ուսանողներին՝ առնվազն 20%.
  - 4) հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա ուսանողներին՝ առնվազն 10%.
  - 5) պայմանագրային զինվորական ծառայություն անցնող ուսանողներին՝ առնվազն 10%:
  - 6) ազատամարտիկի երեխա ուսանողներին մինչև 10%.
  - 7) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ բակալավրիատում 18 և ավելի, մագիստրատուրայում՝ 19 և ավելի, միջին որակական գնահատական ունեցող ուսանողներին՝ ևս 10%.
  - 8) համալսարանում աշխատող և դասավանդող ասպիրատներին ու հայցորդներին՝ երկրորդ կիսամյակից սկսած մինչև 50%
  - 9) համալսարանում 0.5 և ավելի դրույքաչափով, հիմնական աշխատող, 5-ից 10 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատողի երեխա ուսանողներին մինչև 20%, 10-15 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատողի երեխա ուսանողներին մինչև 25%, 15 և ավել տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատողի երեխա ուսանողներին՝ մինչև 30%.
  - 10) առանձնահատուկ դեպքում այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ համալսարանի հայեցողությամբ:
32. Սույն կանոնակարգի 30-րդ և 31-րդ կետերում սահմանված դեպքերում բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսումնառության համակարգում սովորող առաջին կուրսի ուսանողները համալսարանի և այլ միջոցներով ուսման վարձի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած՝ բացառությամբ սույն կանոնակարգի 33-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքերի:
33. Ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում կարող են տրամադրել նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձինք իրենց միջոցների հաշվին: Փոխհատուցումը կարող է տրամադրվել ուսանողի անվամբ համալսարանի հաշվին փոխանցելու միջոցով:
34. Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված մի քանի պետական և ներհամալսարանական կրթաթոշակներին, ուսանողական նպաստներին և այլ վճարներին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:
35. Ուսանողի ուսման վարձի մասնակի փոխհատուցումն իրականացվում է մեկ ուսումնական տարվա համար, սակայն կարող է վերանայվել յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնառության ցուցանիշների արդյունքներով կամ կարգավիճակի փոփոխության դեպքերում: Սույն կանոնակարգի 36-րդ կետով սահմանված դեպքերում կարող է դադարեցվել տվյալ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսման վարձի

մասնակի փոխհատուցումը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 30-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերում նշված դեպքերի:

36. Ժամանակացույցով սահմանված առաջին (հիմնական) ժամկետում քննությունից անբավարար գնահատական, ստուգարքից չստուգված ստանալու կամ քննությանը, ստուգարքին անհարգելի պատճառով չներկայանալու, քննությունները և ստուգարքները ակադեմիական պարտքերի մարման (լուծարքային) շրջանում վերահանձնելու դեպքերում ուսանողը չի մասնակցում փոխատեղման (ռոտացիա) մրցույթին և զրկվում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից: Հիմնական ժամկետում քննությանը, ստուգարքին չներկայանալը համարվում է հարգելի սույն կանոնակարգի 38-րդ կետում նշված դեպքերում: Այլ դեպքերում ուսանողի բացակայությունը կարող է հարգելի համարվել համալսարանի ռեկտորատի որոշմամբ (եզրակացությամբ)՝ նրա դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Ուսանողի դիմումը և կից փաստաթղթերը ռեկտորատի քննարկմանը ներկայացնում է ֆակուլտետի ղեկանը:
37. Սույն կանոնակարգի 35-րդ և 36-րդ կետերով նախատեսված դեպքերում ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցումը դադարեցվելու դեպքում այն կարող է վերականգնվել հաջորդ ուսումնական տարվա սկզբին՝ նախորդ ուսումնական տարվա ուսումնառության արդյունքներով:
38. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից հարգելի պատճառով (ժամկետային զինվորական ծառայության գորակոչվելու, առողջական վիճակի հետ կապված ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի, ինչպես նաև ուսանողական փոխանակման ծրագրով արտասահման ուսումնառության գործուղվելու դեպքերում) ուսումնառությունն ընդհատելու դեպքում պահպանում է ուսանողական նպաստի իրավունքը, եթե սահմանված կարգով չի դադարել այդ իրավունքը: Ազատված ուսանողական նպաստը նույն կուրսում տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում և հետագայում ավելացվում է այն կուրսի ուսանողական նպաստներին, որում ուսանողը վերականգնում է ուսանողական իրավունքները:
39. Համալսարանից հեռացված և վերականգնված, համալսարանի այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից և այլ բուհերից համալսարանի առկա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել համալսարանում մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:
40. Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական կառավարման լիազոր մարմինը:

#### **IV. ԿՐԹԱԹՈՇԱԿ ԵՎ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

41. Պետական և ներհամալսարանական կրթաթոշակներ տալու, ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման, ինչպես նաև դրանց դադարեցման գործընթացներն իրականացվում են համալսարանի ռեկտորի հրամանով կազմավորված մրցույթային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) որոշման (եզրակացության) հիման վրա:

42. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համալսարանի ռեկտորը (հանձնաժողովի նախագահ), ռեկտորի առաջին տեղակալ-պրոռեկտորը, համալսարանի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորը, ֆինանսական աշխատանքները համակարգող պրոռեկտորը, գիտական քարտուղարը, իրավախորհրդատուն, իրավաբանը (հանձնաժողովի քարտուղար), համապատասխան ֆակուլտետի դեկանը և ուսխորհրդի նախագահը:
43. Հանձնաժողովը քննարկում է պետական, ներհամալսարանական կրթաթոշակներ տալու և ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ու դրանց հավասարեցված այլ վճարների վերաբերյալ հարցեր:
44. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
45. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում ուսանողին տրամադրվում է ըստ նրա դիմումի: Դիմումում նշվում են ուսանողի ֆակուլտետը, մասնագիտությունը, կուրսը, խումբը, սոցիալական կարգավիճակը, համապատասխան ուսանողական նպաստի տեսակը և ուսանողի միջին որակական գնահատականը (ՄՈԳ): Ուսանողը դիմումին կից ներկայացնում է իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը, անձնագրի լուսապատճենը, տեղեկանք միջին որակական գնահատականի մասին (տրվում է ֆակուլտետի դեկանի կողմից) և կարգավիճակը հաստատող փաստաթղթերի լուսապատճենները՝ հաստատված դեկանի կողմից:
46. Կրթաթոշակ տալու համար առաջարկություն ներկայացնող անձը առաջարկությանը կից ներկայացնում է սույն կանոնակարգի 15-րդ կետում սահմանված ցուցանիշների վերաբերյալ փաստաթղթերը:
47. Համալսարանի ուսանողները կամ կրթաթոշակի առաջարկություն ներկայացնող անձինք մրցույթով կրթաթոշակ տալու կամ ուսանողները ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցում ստանալու վերաբերյալ դիմումները կից փաստաթղթերով ներկայացնում են համապատասխան ֆակուլտետի դեկանատ, ընդ որում՝
- 1) Համալսարանի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցում ստանալու համար հավակնորդները դիմումը և կից փաստաթղթերը համապատասխան ֆակուլտետի դեկանատ են ներկայացնում յուրաքանչյուր տարի մինչև սեպտեմբերի 15-ը.
  - 2) առաջին կուրսում սովորող ուսանողներն ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից ուսման վարձի փոխհատուցում ստանալու համար դիմումները ներկայացնում են ֆակուլտետի դեկանատ՝ մինչև փետրվարի 20-ը.
  - 3) երկրորդ և բարձր կուրսերի առկա ձևով սովորող ուսանողները ուսման վարձի փոխհատուցում ստանալու համար դիմումները և կից փաստաթղթերը ֆակուլտետի դեկանատ են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը: Հեռակա ուսուցմամբ սովորողները՝ առաջին կիսամյակի պարապմունքները սկսելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:
48. Ֆակուլտետի դեկանատը, ստանալով կրթաթոշակի և ուսանողական նպաստի մասին ուսանողների դիմումները, առաջարկությունները և փաստաթղթերը, դրանք լրացնում է սույն կանոնակարգի 15-րդ կետով սահմանված ցուցանիշները հիմնավորող փաստաթղթերով:

49. Ֆակուլտետի ղեկանատը ստացված դիմումների և ներկայացված փաստաթղթերի հիման վրա քննարկման արդյունքներով պարզում է պետական ու ներհամալսարանական կրթաթոշակների կամ ուսանողական նպաստների և (կամ) դրանց հավասարեցված այլ վճարների իրավունք ունեցող հավակնորդ ուսանողների կազմն՝ ըստ մասնագիտությունների հատկացված տեղերի և ուսանողական նպաստների քանակի, ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցվող գումարի չափին համապատասխան իրականացնում մրցույթ՝ հիմք ընդունելով հավակնորդների ուսման առաջադիմության, հասարակական գործունեությունը, պատշաճ վարքագծի վերաբերյալ ցուցանիշները և առավել բարձր ցուցանիշներ ունեցող ուսանողների տվյալների հիման վրա կազմում է կրթաթոշակի և (կամ) ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կամ դրանց հավասարեցված այլ վճարների իրավունք ունեցող հավակնորդների (ուսանողների) վերջնական ցուցակները, որոնք վավերացվում են ղեկանի ստորագրությամբ:
50. Ֆակուլտետի ղեկանը կրթաթոշակի կամ ուսանողական նպաստի հավակնորդների ցուցակները, առաջարկությունները և դիմումները կից փաստաթղթերով մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 25-ը ներկայացնում է հանձնաժողովի քննարկմանը:
51. Հանձնաժողովը յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ առանձին քննարկում է ըստ տեսակի կրթաթոշակ կամ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տալու հարցերն ու քննարկման արդյունքներով որոշմամբ հաստատում է կրթաթոշակ կամ ուսանողական նպաստ տալու ցուցակները:
52. Հանձնաժողովը ֆակուլտետի ղեկանի կողմից ներկայացված ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի այլ խախտումներ հայտնաբերելու դեպքում կրթաթոշակների և տվյալ մասնագիտության ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը վերադարձնում է տվյալ ֆակուլտետ՝ խախտումները և անճշտությունները վերացնելու առաջարկով:
53. Հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել կրթաթոշակի կամ ուսանողական նպաստի համար դրամաշնորհ տրամադրող կազմակերպության ներկայացուցիչը կամ ֆիզիկական անձը: Անհրաժեշտության դեպքում նիստին կարող են հրավիրվել կրթաթոշակի և ուսանողական նպաստի հավակնորդները:  
 Հանձնաժողովի նիստերը արձանագրում է քարտուղարը: Արձանագրությունում նշվում են հանձնաժողովի անդամների կարծիքները և առաջարկությունները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները՝ 2 օրինակից:  
 Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահպանվում են հինգ տարի:
54. Հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակների վերաբերյալ բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են հանձնաժողովի վերանայմանը: Նշված ժամկետի ավարտից հետո հանձնաժողովը քննարկում է ներկայացված բողոքները, դրանք բավարարում կամ մերժում, հաստատում կրթաթոշակների և ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման հավակնորդների վերջնական ցուցակները և այն ներկայացնում համալսարանի ռեկտորի հրամանագրմանը:
55. Համալսարանի ռեկտորը հանձնաժողովի որոշման (եզրակացության) հիման վրա հրաման է արձակում ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կամ համապատասխան տեսակի կրթաթոշակ տալու կամ դադարեցնելու մասին: Հրամանում պարտադիր նշվում է ուսանողական նպաստի տրամադրման կամ

դադարեցման ժամկետները: Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման տրամադրման ժամկետը սահմանվում է տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից: Հանձնաժողովի որոշումը, հաստատած ցուցակները և ռեկտորի հրամանը եռօրյա ժամկետում հրապարակվում են համալսարանի կայք էջում, էլեկտրոնային վահանակներում, փակցվում ֆակուլտետների ցուցատախտակներին:

56. Համալսարանից ուսանողի ազատվելու կամ հեռացվելու կամ այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքերում տվյալ ուսումնական տարում կրթաթոշակը կամ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցումը այլ ուսանողների չի տրամադրվում:
57. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին հանձնաժողովի կողմից վերանայվում է ուսանողի՝ սույն կանոնակարգով սահմանված ուսանողական նպաստը կամ կրթաթոշակը հետագայում պահպանելու հարցը: Կրթաթոշակ նշանակելու համար հիմք հանդիսացող ցուցանիշները չպահպանելու կամ համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքերում՝ ուսանողը զրկվում է նշանակված կրթաթոշակից կամ ուսանողական նպաստից: Ազատված կրթաթոշակները հաջորդ ուսումնական տարում սույն կանոնակարգով սահմանված պայմաններով ու կարգով կարող են տրամադրվել այլ ուսանողների:
58. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում համալսարանի կողմից տրամադրվող ուսանողական նպաստի չափը կարող է փոփոխվել՝ նվազել կամ աճել կամ դադարեցվել:
59. Համալսարանը տվյալ տարվա ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ տվյալները մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը ներկայացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

## **V. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

60. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
61. Սույն կանոնակարգը, բացառությամբ 36-րդ կետի ուժի մեջ է մտնում համալսարանի գիտական խորհրդի որոշումը ռեկտորի կողմից հաստատվելու հաջորդ օրվանից, 36-րդ կետը ուժի մեջ մտնում է 2017-2018 ուսումնական տարվանից::
62. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով:
63. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած է համարվում համալսարանի գիտական խորհրդի 23.10.2014թ-ի 01-10/14 որոշմամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հիմնադրամի ուսանողներին ուսանողական նպաստ և կրթաթոշակ տալու մասին» կարգը:

**Գիտական քարտուղար՝**

**Լ.Հ. Լևոնյան**

30 սեպտեմբերի 2016թ.

